

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
համոզված լինելով, որ մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում փոխհարաբերությունների զարգացումը նպաստում է ժողովուրդների և ազգերի, ինչպես նաև պետությունների միջև փոխըմբռնմանը, ցանկանալով շարունակել Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության ու նրանց ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունները, որոշեցին ստորագրել սույն Համաձայնագիրը և համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Պայմանավորվող կողմերը կզարգացնեն և կամրապնդեն մշակույթի, կրթության, գիտության, արվեստի, երիտասարդության և սպորտի բնագավառներում համագործակցության և փորձի փոխանակման բոլոր ձևերը յուրաքանչյուր պետության ազգային օրենսդրության շրջանակներում:

ՀՈՂՎԱԾ 2

Պայմանավորվող կողմերը կաջակցեն համագործակցությանը գիտության և տեխնոլոգիայի բոլոր բնագավառներում՝ օգտագործելով.

1. գիտության և տեխնոլոգիայի տարբեր բնագավառներում առանձին համաձայնագրերի կնքումը և համատեղ ծրագրերի իրականացումը, ուսուցումը և այլ տիպի գործունեությունը,
2. համատեղ խմբերի ձևավորումը, որոնց նպատակը կլինի երկկողմ և բազմակողմ գիտական և տեխնոլոգիական նախագծերի մշակումը,
3. գիտնականների և մասնագետների փոխանակումը համատեղ գիտահետազոտական նախագծերի իրականացման շրջանակներում,
4. երիտասարդ գիտնականներին աջակցության միջոցները,
5. գիտաժողովների և սեմինարների մասին տեղեկության փոխանակումը՝ խրախուսելով երկու երկրների գիտնականների մասնակցությունը նմանատիպ միջոցառումներին,
6. հրատարակումների, գիտահետազոտական նախագծերի արդյունքների, գիտական և տեխնոլոգիական փաստաթղթերի փոխանակումը,
7. ուղղակի համագործակցությունը նախարարությունների, համալսարանների, ակադեմիաների և հետազոտական աջակցության կենտրոնների միջև,
8. ցուցահանդեսների և գիտատեխնիկական ցուցադրումների կազմակերպումը:

ՀՈՂՎԱԾ 3

Պայմանավորվող կողմերը կաջակցեն կրթության բնագավառում երկկողմ համագործակցությանը և փորձի փոխանակմանը՝ օգտագործելով.

1. ուղղակի համաձայնագրեր համալսարանների և բուհերի միջև,
2. կրթության ղեկավարման բոլոր տեսակի բնագավառների մասնագետների փոխանակումները,
3. լեզվի ուսուցման կուրսերի իրականացման նպատակով դպրոցականների և ուսանողների փոխանակումը,
4. ուսուցիչների և ակադեմիական գիտնականների փոխանակումները, մասնակցությունը կոնֆերանսներին և սեմինարներին, խորհրդակցությունները համատեղ նախագծերի վերաբերյալ,
5. երկու երկրների լեզվի և գրականության դասավանդման միջոցների փոխանակումները. այդ նպատակով կողմերը կգործադրեն լեզվի և գրականության դասախոսներ, ուսանողներ և ուսուցիչներ՝ ամառային կուրսերի, ինչպես նաև կփոխանակեն լեզվի և գրականության ուսուցման համար անհրաժեշտ հրատարակումներ ու դասախոսություններ,
6. երկու երկրների ուսանողների և ասպիրանտների համար կրթաթոշակների, ուսուցման տեղերի

փոխանակումները:

ՀՈՒՎԱԾ 4

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն կրթության վկայականների փոխճանաչմանն ուղղված առանձին համաձայնագրերը:

ՀՈՒՎԱԾ 5

Պայմանավորվող կողմերը կգարգացնեն և կամրապնդեն մարդկային արժեքների և մշակույթի բնագավառում փոխճանաչությունը և այդ նպատակով կաջակցեն արվեստի, մշակույթի և հնագիտության բնագավառներում համագործակցության տարբեր ձևերին:

Երկու կողմերը լավագույնս համագործակցելու նպատակով կխրախուսեն ուղղակի համաձայնագրերի կնքումը արվեստի և մշակույթի բնագավառի հաստատությունների միջև և զանազան մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով կփոխանակեն խմբեր կամ անհատներ:

ՀՈՒՎԱԾ 6

Պայմանավորվող կողմերը կաջակցեն համագործակցությանը երկու երկրների մշակութային ժառանգության պահպանումն իրականացնող հաստատությունների միջև հատկապես միջազգային նախագծերին ուղղակի մասնակցության ձևով:

ՀՈՒՎԱԾ 7

Պայմանավորվող կողմերը կաջակցեն հեղինակային իրավունքների պահպանման համակարգի հետագա բարելավման և երկու ժողովուրդների մշակութային արժեքները հանրամատչելի դարձնելու գործում:

ՀՈՒՎԱԾ 8

Պայմանավորվող կողմերը կաջակցեն համագործակցության տարբեր ձևերը իրենց համապատասխան կենտրոնական ու տեղական արխիվների, հետազոտական և ռեստավրացիոն կենտրոնների, թանգարանների և գրադարանների միջև, ինչպես նաև կապահովեն երկու երկրների գիտնականների և հետազոտողների մուտքը այդ կարգի հաստատություններ փոխադարձության հիման վրա՝ համապատասխան ազգային օրենքների ու նորմերի համաձայն և համապատասխան իշխանությունների համաձայնությամբ:

ՀՈՒՎԱԾ 9

Պայմանավորվող կողմերը կաջակցեն և կխրախուսեն համագործակցությունը և զարգացումը տեսաձայնագրային հեռարձակումների բնագավառում՝ փոխանակելով երկու երկրների տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը վերաբերող կազմված ռադիոհաղորդումներ և հեռուստատեսային ծրագրեր, ինչպես նաև երկու ժողովուրդների մասին գիտելիքների տարածումը խթանելու նպատակով երկու երկրների տարածքներում կհավատարմագրեն ռադիոհաղորդավարներ և հեռուստահաղորդավարներ:

ՀՈՒՎԱԾ 10

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն և կաջակցեն համագործակցության տարբեր ձևերը գեղարվեստական (գրողներ, ճարտարապետներ, քանդակագործներ, երաժշտագետներ, թատերական և կինոարվեստի բնագավառի աշխատողներ, լուսանկարիչներ) խմբերի, ընկերությունների և միությունների միջև:

ՀՈՒՎԱԾ 11

Պայմանավորվող կողմերը ֆիլմադարանների և կինեմատոգրաֆիայի բնագավառի հաստատությունների միջև համատեղ նախագծերի իրականացման, ֆիլմերի փոխանակման, երկու երկրներում կազմակերպվող փառատոներին մասնակցության միջոցով կաջակցեն համագործակցությանը կինեմատոգրաֆիայի բնագավառում:

ՀՈՒՎԱԾ 12

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն երկու երկրների երիտասարդական և մարզական կազմակերպությունների ու հաստատությունների միջև համագործակցության և փոխանակումների զարգացմանը:

Պայմանավորվող կողմերը կզարգացնեն համագործակցությունը ֆիզիկական կրթության և սպորտի, մարզիկների, մարզական թիմերի և մասնագետների փոխանակման բնագավառում:

Սույն հոդվածով նախատեսված համագործակցության ձևերը, բովանդակությունը և պայմանները կհամաձայնեցվեն Պայմանավորվող կողմերի՝ այդ բնագավառների պատասխանատու հաստատությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 13

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն և կապահովեն համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի իրենց ազգային հանձնաժողովների միջև:

ՀՈՂՎԱԾ 14

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն զբոսաշրջության բնագավառում առանձին համաձայնագրերի կնքումը այդ բնագավառում համագործակցությունը զարգացնելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ 15

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրով նախատեսվող դրույթների իրագործման և ֆինանսավորման ձևերի իրականացման նպատակով կստորագրեն համագործակցության միջգերատեսչական ծրագրեր:

ՀՈՂՎԱԾ 16

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի ներքին օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ գործընթացն ավարտելու մասին դիվանագիտական ճանապարհով միմյանց իրազեկ պահելու օրվանից:

ՀՈՂՎԱԾ 17

Սույն Համաձայնագիրը գործում է 5 տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ 5 տարիների համար, եթե Կողմերից որևիցե մեկը համապատասխան ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով չհայտնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում փոխանակման բոլոր ծրագրերը, համատեղ միջոցառումները և նախագծերը, որոնք կազմակերպվել են սույն Համաձայնագրի դրույթների հիման վրա, ուժի մեջ կմնան մինչև ավարտը:

Կատարված է Կահիրե քաղաքում 1997 թվականի մարտի 17-ին, հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 5-ից: